

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈՂՆԵՐԸ

ԱՄԻՐՅԱՆ Գ. Ռ.

Պատմության տեսական վերլուծությունը, պատմական, հասարակական երևույթների, դեպքերի ու իրադարձությունների, մարդկային գործունեության ու վարքի ուսումնասիրությունը ենթադրում են համապատասխան մեթոդական մոտեցում, որոշակի մեթոդների կիրառում: Ամեն մի գիտական տեսություն, այդ թվում՝ սոցիալական տեսությունը, անխզելիորեն կապված է մեթոդի հետ, որը, Ֆ. Բեկոնի դիպուկ արտահայտությամբ, նման է գիտության ճանապարհը լուսավորող կանթեղի: Քանի որ ամեն մի մեթոդ հնարավորություն է տալիս ճանաչելու օբյեկտի միայն առանձին կողմերը, հետևաբար մեկ մեթոդով հնարավոր չէ բացահայտել հասարակական կյանքի բարդ երևույթները. այստեղ առաջ է գալիս առանձին մեթոդների, մեթոդական տարբեր հնարների «փոխադարձ լրացման» անհրաժեշտությունը¹:

Մարդկային պատմությունը, հասարակությունը, սոցիալական իրականությունը հանդես են գալիս որպես ճանաչողական ամենաբարդ օբյեկտներ և ունեն հետազոտության տարբեր մեթոդներ, որոնց ոլորտում նախ անհրաժեշտ է առանձնացնել պատմական և տրամաբանական մեթոդները: Հարկ է նշել, որ պատմական և տրամաբանական մեթոդները հայտնագործել է Հեգելը, որն իր ողջ փիլիսոփայական համակարգը, ինչպես նաև պատմության փիլիսոփայությունը շարադրել է՝ ելնելով պատմականի և տրամաբանականի միասնության դրույթից: Հեգելի փիլիսոփայության համակարգում հակասությունները քննարկվում են պատմական հաջորդականությամբ, յուրաքանչյուր հասկացություն բարձր է իր նախորդից և՛ պատմական, և՛ տրամաբանական առումով: Քանի որ բացարձակ գաղափարը (իդեան) աշխարհի հիմքն է և առաջնային է ոչ թե ժամանակային, այլ տրամաբանական իմաստով, հետևաբար, տրամաբանականը հիմքն է պատմականի և էական է բոլոր իմաստներով:

Պատմական և տրամաբանական մեթոդն ունի ճանաչողական բարձր արժեք, քանի որ արտահայտում է գործընթացի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի միասնությունը: Տեսնենք, թե ինչու՞մն են այդ մեթոդի էությունը, հայացքները:

¹ Վարդանյան Թ., Սոցիալական փիլիսոփայության հիմնախնդիրները, Ե., 2008, էջ 31:

Հեզգելի փիլիսոփայությունը ճիշտ հասկանալու համար պետք է իմանալ, որ այն հանդես եկավ որպես անցյալի իդեալիստական փիլիսոփայության տրամաբանական ընդհանրացում: Այդ պատճառով էլ համոզված ասում ենք, որ Հեզգելի փիլիսոփայությունը բարձր էր իր նախորդներից ոչ միայն պատմական, այլև տրամաբանական տեսանկյունից:

Ինչպես ամեն մի երևույթ, այնպես էլ սոցիալական իմացության գործընթացը, ենթադրում է պատմականության սկզբունք, սոցիալական ճանաչողության զարգացման պատմական շրջանների վերլուծության անհրաժեշտություն: Պատմական մեթոդը հնարավորություն է տալիս պարզելու, թե ինչպես է ծագել հասարակական այս կամ այն երևույթը, զարգացման ինչ ուղի է անցել և վերջում ինչ արդյունքի հասել: Անհնար է ըմբռնել պատմական գործընթացի արդյունքը՝ առանց պարզելու պատմական զարգացման ուղիները: Այս իմաստով պատմական մեթոդը ուսումնասիրում է իրերի ու երևույթների օբյեկտիվ փոփոխության և զարգացման գործընթացը: Պատմական մեթոդն օբյեկտիվ է, քանի որ պատմական դեպքերն ու իրադարձություններն արտահայտվում են այն հաջորդականության մեջ, այնպիսի մանրամասնություններով, ինչպես կատարվել են: Դա կոնկրետ արտացոլում է, սակայն դեռևս չի նշանակում, թե պատմական մեթոդ չի կիրառում վերացարկումը: Առանց վերացարկման՝ պատմական իմացությունը կիսճճվի իրադարձությունների բարդ ցանցում, և կարևորը՝ էականը, չի արտացոլվի: Օրինակ՝ Ավարայրի ճակատամարտի օրն արևոտ էր, թե ամպամած, դա չէ կարևորը, այլ այն, որ հայ ժողովուրդը բարոյական մեծ հաղթանակ տարավ պարսկական հզոր բանակի դեմ: Փիլիսոփաները, կարևոր տեղ տալով պատմական մեթոդին, միաժամանակ նշել են նրա անբավարար, սահմանափակ լինելը իմացության գործընթացում: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է պատմական մեթոդը լրացնել տրամաբանականով: Տրամաբանականը պատմականի ընդհանրացված արտացոլումն է, այն արտահայտում է իրականությունն իր օրինաչափ զարգացման մեջ, բացատրում է այդ զարգացման անհրաժեշտությունը: Տրամաբանական մեթոդը պատմականը արտահայտում է վերառնված, մաքուր ձևով և հանդես է գալիս որպես ընդհանրացված, վերացական մեթոդ: Եթե պատմական մեթոդը հասարակական երևույթներն արտացոլում է զանազան պատահականություններով, ապա տրամաբանական մեթոդը բացահայտում է երևույթների զարգացման ներքին էությունը: Տրամաբանականը ևս օբյեկտիվ պայմանավորվածություն ունի, միայն այն տրամաբանությամբ, որ երևույթների օրինաչափության ներքին կողմն անվանում ենք տրամաբանական, իսկ օբյեկտիվ կողմը՝ պատմական: Պատմական և տրամաբանական մեթոդների բնույթի հարցը գիտական տարակարծությունների տեղիք է տվել: Ոմանք կարծում են, թե պատմական և

տրամաբանական մեթոդները համընկնում են, քանի որ ունեն մի միասնական հիմք՝ օբյեկտիվ, պատմական օրինաչափություն, մյուսները նույնացնում են՝ գտնելով, որ պատմական գործընթացի պատահականությունները ներքին օրինաչափությունների արտաքին դրսևորումներն են: Մակայն համընկնումը բացարձակ չէ, քանի որ եթե ելնենք միայն պատմության ներքին օրինաչափություններից, շեղումներն ու պատահականություններն անտեսենք, ապա պատմական որոշ դեպքեր անհասկանալի կմնան: Պատմության մեջ, հասարակական կյանքում երբեմն պատահականությունները մեծ դեր ունեն և փոխում են իրադարձությունները, դրանց ընթացքն ու բնույթը: Համաշխարհային պատմության մեջ լինում են վճռական, ակնթարթային պահեր, երբ մի «այո»-ն կամ մի «ոչ»-ը կարող է կանխորոշել միլիոնավոր մարդկանց բախտը, ժողովուրդների ու ազգերի ճակատագիրը: «Միլիոնավոր մարդկանցից ծնվում է միայն մի հանճար, ապարդյուն անցնող ժամերից միայն մեկն է դառնում իրոք պատմական. դա մարդկության աստեղային ժամն է»², - նկատել է Ս. Յվայգը:

Վաթեռյոռյի ճակատամարտում Նապոլեոն Բոնապարտի բանակի պարտության պատճառը Ստեֆան Յվայգը տեսնում էր մարշալ Գրուշի սխալի մեջ, որ մի վայրկյանում վճռեց իր բախտը, Նապոլեոնի և ամբողջ աշխարհի բախտը. «Փոքր, սահմանափակ մարդու անվճռականությունը խորտակեց այն, ինչ մարդկանցից ամենաքաջարին, ամենախորաթափանցը ստեղծել էր հերոսական քսան տարվա ընթացքում»:

Պատմական զարգացման ընթացքում պատահականություններն անխուսափելի են, սակայն չի կարելի բացարձակացնել դրանց դերը, այլապես պատմությունը կդիտարկվի քառասային, տարերային, անկազմակերպ շարժում, որի զարգացման ուղղությունը կմնա անհասկանալի:

Պատմության փիլիսոփայության ուսումնասիրության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն ընդհանրացնող և անհատականացնող մեթոդները: Այս մեթոդների տարբերությունը կայանում է նարանում, որ առաջինը փորձում է բացահայտել պատմական զարգացման համընդհանուր, էական օրինաչափությունը, իսկ երկրորդը՝ անհատականը, անկրկնելին, եզակին, բացառիկը, յուրահատուկը: Սոցիալական իմացությունը, եթե ցանկանում է ընդգրկել սոցիալական ամբողջը, ապա պետք է ընդհանուրի հետ մեկտեղ ուսումնասիրի եզակին, օբյեկտիվի հետ՝ սուբյեկտը, անհրաժեշտի հետ՝ պատահականը: Ընդհանրացնող և անհատականացնող մեթոդները պատմափիլիսոփայության մեջ մանրամասն ուսումնասիրել են նորկանտականության հայեցակետում, որտեղ երկու մեթոդների

² Ստեֆան Յվայգ, Մարդկության աստեղային ժամերը, 1947, էջ 3, էջ 99:

բնույթի հակադրությունը մեկնաբանվում էր ուսումնասիրության օբյեկտներով: Նորկանտականության խոշոր ներկայացուցիչներից մեկի՝ Ռիկկերտի կարծիքով՝ ընդհանրացնող մեթոդը գործում է բնագիտության բնագավառում, իսկ անհատականը՝ պատմական գիտության մեջ: Նա իր «Հասարակությունների կազմավորման բնագիտական սահմանները» աշխատության մեջ տվեց գիտությունների դասակարգման ու գիտական հասկացությունների կազմավորման սկզբունքները: Բադենյան դպրոցի հիմնադիր Վ. Վինդելբանդը իր «Պատմություն և բնագիտություն» աշխատության մեջ արտահայտում էր այն տեսակետը, որ պատմության և բնագիտության տարբերությունը ոչ թե բովանդակային է, այլ ձևական, քանի որ երկու գիտություններն էլ իրենց բնույթով էմպիրիկ են, երկուսն էլ էլակետ ունեն իրենց նախադրյալների ապացուցումը, բայց «պատմության ուժը դատողությունն է, բնագիտության ուժը՝ վերացարկումը»³: Ըստ նրա՝ էմպիրիկ (փորձնա-կան) գիտություններն իրականության ճանաչողության մեջ փնտրում են կա՛մ ընդհանուրը՝ բնական օրենքների ձևով, կա՛մ անհատականը՝ որոշակի պատմական ձևով: Հ. Ռիկկերտը, ավելի խորացնելով Վինդելբանդի տեսակետը, գտնում էր, որ գիտությունների բաժանման ձևական սկզբունքներից բովանդակայինին անցնելու համար անհրաժեշտ է էլնել արժեքներից: Ընդհանրացնող մեթոդի դեպքում մենք գործ ունենք այնպիսի նմուշների հետ, որոնք մեզ համար արժեք չեն ներկայացնում, իսկ անհատականացնող մեթոդի դեպքում նկատի ունենք արժեքները, քանի որ անկրկնելի և անհատական լինելով՝ պատմական փաստերը մեզ համար արժեք են ներկայացնում:

Նորկանտականները հիմնավորապես պնդում են այն տեսակետը, որ պատմությունը կերտում են եզակի, բացառիկ, անկրկնելի անհատները, որոնց կյանքը չի ենթարկվում օրինաչափության: Անգլիացի նշանավոր պատմաբան, փիլիսոփա Ա. Թոյնբին արտահայտում էր այն տեսակետը, որ ճշմարիտ պատմությունը չունի օրենք, այն ունի միայն ճակատագիր: Ռուս փիլիսոփա Ն. Բերդյաևի համոզմամբ՝ պատմության էությունը կարելի է հասկանալ միայն մարդկության ճակատագրի և համաշխարհային ճակատագրի էության բացահայտմամբ. «Մարդկության ճակատագրի մեջ ես պետք է ճանաչեմ իմ սեփական ճակատագիրը, և իմ ճակատագրի մեջ ես պետք է ճանաչեմ պատմական ճակատագիրը»⁴: Այդ պատճառով էլ պատմական գիտակցության համար ավելի կարևոր բան չկա, քան անցյալի և ապագայի նկատմամբ անհրաժեշտ վերաբերմունքի ձևավորումը: Պատմության վերլուծության սուբյեկտիվ մեթոդ է առաջադրում գերմանացի փիլիսոփա,

³ Винделбанд В. История и естествознание, СПб., 1898, с. 11.

⁴ Бердяев Н. Смысл истории, М., 1990, с. 12, 15.

սոցիոլոգ Մ. Վեբերը: Մշակելով հասարակության ճանաչողության մեթոդոլոգիան⁹ նա սոցիոլոգիայի մեջ մտցրեց իդեալական տիպերի մասին հասկացությունը, որի միջոցով պատմության և հասարակության վերաբերյալ փաստական նյութեր կարելի է համակարգել: Դրանք իդեալական տիպերի սուբյեկտիվ մոդելներ են, որոնք չեն արտացոլում հասարակական իրականությունը: Ըստ Վեբերի՝ մարդկանց սոցիոլոգիայի գործունեությունը իրոք սոցիալական է միայն այն դեպքում, երբ համապատասխանում է իդեալական կերպարին: Հետևաբար սոցիալական իմացության խնդիրն է անհատական և խմբային գործունեության մեջ բացահայտել սուբյեկտիվ մոտիվը (դրդապատճառը) և այլ մարդկանց հանդեպ մարդու ունեցած հոգեբանական դիրքորոշումը: Գ. Զիմմելը նույնպես գտնում էր, որ հասարակական կյանքը պետք է բացահայտել՝ ելնելով սոցիալական փաստերից, դրանով իսկ գիտությունն ազատել քաղաքական, կրոնական, մետաֆիզիկական նախապաշարմունքներից, դարձնել ճշգրիտ. «Ինչպես երկրաչափությունը գիտություն է ֆիզիկական աշխարհի մասին, այնպես էլ սոցիոլոգիան⁹ սոցիալական աշխարհի»: Գաղափարն այն մասին, որ մաթեմատիկայի և երկրաչափության ճշգրիտ մեթոդը կարելի է կիրառել հասարակական կյանքի երևույթների ուսումնասիրության ժամանակ, տվել է նոր դարաշրջանի անգլիացի փիլիսոփա Թ. Հոբսը: Անշուշտ, մաթեմատիկական մեթոդը ապահովում է գիտական իմացության, այդ թվում՝ սոցիալական իմացության օբյեկտիվությունը, սակայն սոցիալական բոլոր երևույթները չենք կարող այդ մեթոդով վերլուծել, քանի որ կան այնպիսի երևույթներ, ինչպիսիք են մարդն ու նրա ներաշխարհը, որոնք չեն ենթարկվում ձևականացման, մաթեմատիկացիայի: Մի թե հնարավոր է մարդկային ամենահզոր զգացմունքը՝ սերը, կամ նույնքան հզոր ու անսանձ ասելությունն արտահայտել մաթեմատիկական ճշգրիտ հավասարումներով, երջան-կությունն ու տառապանքը ներկայացնել բանաձևերով, չորությունն ու նախանձը, խանդն ու կասկածանքը բացատրել թվերով կամ երկրաչափական պատկերներով: Հանճարեղ Սևակը՝ խորաթափանց փիլիսոփա բանաստեղծը, այդ մասին գրել է.

Հաշվո՛ւմ եք, հաշվո՛ւմ ...

Հաշվեցե՛ք հապա, թե ի՞նչ ալիքով, քանի՞ վայրկյանում

Եվ քանի՞ գրամ արյուն է հոսում աղջկա սրտից

Դեպի ամոթխած այտերը նրա՝

Առաջ բերելով ա՛յն բռնկումը ջերմամիջուկյան,

Որ մինչև այսօր, միամտաբա ր, շիկնանք ենք կոչել:

Եվ կոսմիկական ճառագայթների ի՞նչ հոսք է անցնում

Մեր մթնոլորտված աչքերի միջով,
 Երբ հանկարծակի նրանք դիպչում են ուրիշ աչքերի,
 Եվ այդ փոխադարձ ճառագայթումը
 Վտանգավո՞ր է մեր սրտի համար,
 Թե՞ օգտակար է⁵:

Սա մաթեմատիկական մեթոդի և մեքենայական մտածողության սահմանափակության բացահայտման հրաշալի նմուշ է, որին կարող էր հասու լինել միայն Պ. Սևակի նման հանճարը, խորիմաստ մտածողության բարձունքներին հասած բանաստեղծը, որ պահանջում էր ցույց տալ թիվը մարդկային երազների ու անուրջների, անկասկածելի թիվը բազում կասկածների, կամ ցույց տալ գիծը հիասթափության, կամ գիծը նաև հուսախաբության, որը մեր կյանքի հետ կազմում է գուգահեռություն:

Այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ եթե սոցիալական համակարգի բոլոր երևույթներն ուսումնասիրվում են մակրոմակարդակի վրա, օբյեկտիվ անհրաժեշտության բացակայությամբ, ապա հասարակական կյանքը ներկայացվում է որպես հոգևոր արժեքներից զուրկ, լոկ օբյեկտիվ գործընթաց:

Հասարակական կյանքի վերլուծության ընթացքում առանձնահատուկ նշանակություն ունի համակարգային մեթոդը, որը հասարակությունն ուսումնասիրում է բոլոր համակարգերի, մասերի, տարրերի փոխազդեցության մեջ: Համակարգային մեթոդը հասարակությունը դիտարկում է որպես տարբեր տարրերից, մասերից, բնագավառներից, ոլորտներից, համակարգերից բաղկացած մի բարդ համակարգ: Այն ուսումնասիրելու համար նախ անհրաժեշտ է առանձնացնել հասարակական կյանքի չորս հիմնական համակարգ՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր:

Համակարգային մեթոդի դեպքում պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ամեն մի համակարգ կայուն, առավելապես ավարտուն կառուցվածքային փոքր միավորներից կազմված ամբողջություն է: Սակայն սոցիալական համակարգերը կազմված են բազմաթիվ միավորներից, այսպես՝ ազգերի, դասակարգերի, ժողովուրդների թիվը հաշվվում է միլիոններով, մարդկանց մտքերի ու զգացմունքների թիվը՝ միլիարդներով: Սոցիալական ամեն մի համակարգի ներսում մարդկանց միջև ձևավորվում են ինչպես մտածելակերպի, սովորույթների, ավանդույթների ընդհանուր գծեր, այնպես էլ տարրերից, առանձնահատուկ գծեր: Ինչպես Վ. Կանկեն է նկատել՝ «Այնպիսի բոլոր համակարգերում, ինչպիսին մարդկային հասարակությունը, որոնցում մի մասնիկն էլ համակարգի մասնիկն է, որի մասնիկն էլ համակարգի մասնիկն է»:

⁵ Սևակ Պ., Երկեր, հ. 1, Ե., 1982, էջ 152, 154:

րակությունն է, համակարգային հատկությունները ձևավորվում են բազմաթիվ անհատական «գործակալների խաչաձևման» հետևանքով»⁶: Քանի որ հասարակությունը արագ փոխվում է, փոխվում են նաև սոցիալական համակարգերի ներսում սոցիալ-տիպական և անհատական գծերն ու հատկությունները: Համակարգային մոտեցումը հասարակության նկատմամբ պահանջում է ուսումնասիրվող համակարգերի ներքին ու արտաքին կողմերի սահմանազատում, դրանով իսկ մտածողությունն ուղղում է դեպի երևույթից էության ճանաչողության, դեպի համակարգի ամբողջական իմացության: Հասարակական ամեն մի համակարգ իր հերթին կազմված է տարբեր տարրերից, մասերից ու ենթահամակարգերից, որոնք փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ են:

Համակարգային մեթոդի դասական օրինակը տվել է Հեգելը, որը, նշելով այդ մեթոդի իրավաբանական նշանակությունը, գրում էր. «Փիլիսոփայությունն առանց համակարգի չի կարող իր մեջ որևէ գիտական բան ունենալ»⁷: Մարքսը նույնպես մեծ տեղ էր տալիս համակարգային մեթոդին. հասարակական կյանքի ոչ մի երևույթ հնարավոր չէ հասկանալ առանց հասարակական-տնտեսական ֆորմացիայի համակարգում այն բնորոշելու, որովհետև նույն երևույթը տարբեր ֆորմացիաներում կարող է տարբեր դեր խաղալ և առանձնահատուկ նշանակություն ձեռք բերել: Համակարգային մոտեցումը բացահայտում է պատմական գործընթացի դիալեկտիկան, հնարավորություն է տալիս կատարելու համաշխարհային պատմության պարբերացում, կոնկրետ պատմական փուլերի առանձնացում և ուսումնասիրություն: Այն միաժամանակ բացահայտում է հասարակական կյանքի տարբեր կողմերի կոնկրետ-պատմական միասնությունը, նյութական ու հոգևոր համակարգերի յուրահատկությունները: Սակայն չի կարելի համակարգային մեթոդը բացարձակացնել, այլապես կհանգենք միակողմանիության: Պատահական չէ, որ այդ միակողմանիությունը հաղթահարելու համար ամերիկացի փիլիսոփա Թ. Պարսոնսն առաջադրեց հասարակության ուսումնասիրության համակարգակառուցվածքային մեթոդը:

Համակարգակառուցվածքային վերլուծության մեթոդը պահանջում է հասարակության համակարգերն ուսումնասիրել ամբողջի ու մասի, կառուցվածքի ու տարրի փոխհարաբերության մեջ: Այս մեթոդը հնարավորություն է տալիս վերհանելու ուսումնասիրվող համակարգերից յուրաքանչյուրի կառուցվածքային մակարդակների առանձնահատկությունները: Կառուցվածքահամակարգային վերլուծության տեսաբաններ Թ. Պարսոնսը և Ռ. Մերտոնը գտնում են, որ սոցիա-

⁶ Գանկե Վ., Փիլիսոփայություն, Ե., 2001, էջ 208:

⁷ Энциклопедия философских наук., М., 1974, т. 1, с. 100.

լական երևույթները այնպիսի գործառնության կապի մեջ են, որ անհնար է առանձնացնել, թե հասարակական կյանքում որն է առաջնային և որը՝ երկրորդային: Ինչպես կառուցվածքահամակարգային ուղղության, այնպես էլ ստրուկտուրայիզմի ուղղության կողմնակիցները (Լևի-Ստրոս, Մ. Ֆուկո), գերազնահատելով համակարգակառուցվածքային մեթոդի դերը, այն համարում էին միակ ճշգրիտ ու գիտական մեթոդը: Առաջնորդվելով միայն այդ մեթոդով՝ նրանք դետերմինիզմ (պատճառական պայմանավորվածություն) հասկացությունը փոխարինում են գործունեություն, համակարգ, կառուցվածք և գործառնություն հասկացություններով: Պարսոնսը հասարակության համակարգերի հիմքում դնում էր գործողության համակարգերը և նշում էր, որ գործողությունը միշտ կատարվում է որոշակի նպատակով, իմացական հիմքով և արժեքային գնահատմամբ: Նա վերլուծեց հասարակության երեք համակարգերը՝ սոցիալական, անհատական, մշակութային, որոնցից յուրաքանչյուր համակարգ իրականացնում է չորս հիմնական գործառնություն:

- 1) հարաբերություն արտաքին միջավայրի հետ, հարմարվողականության գործառնություն (ադապտացիոն).
- 2) միավորման գործառնություն (ինտեգրացիոն).
- 3) նպատակա դրման իրագործման գործառնություն.
- 4) համակարգի ներսում տեսակի, կերպարի, ձևի, արժեքների պահպանման գործառնություն:

Մշակութային համակարգը ներգործում է անհատի վրա՝ սոցիալականացման ընթացքում: Սոցիալական համակարգն իր հերթին ձևավորվում է մշակութային համակարգում որոշված դերերով: Ամեն մի համակարգի ներսում, որպես հիմնական տարր, հանդես է գալիս մարդը, անհատը: Այս իմաստով սոցիալական կառուցվածքը որոշակի սոցիալական դեր է կատարում մարդկանց հարաբերությունների համակարգում: Կառուցվածքային ֆունկցիոնալիզմի տեսաբանները հասարակությունը դիտարկում են որպես գործունեության բնագավառ, որտեղ գործում են գործառնության կապերով և գործնական հարաբերություններով իրար հետ կապված մարդիկ: Պարսոնսը կարծում էր, որ սոցիալական համակարգի կայունությունը մեծապես կախված է մարդկանց գործունեությունից և վարքից: Նա փորձում է հատուկ վերլուծել անհատի գործունեության մեխանիզմները, վերհանել մարդկային վարքի ներքին շարժառիթներն ու դրդապատճառները: Հասարակությունը մեկնաբանելով որպես անհատների միջև գործառնության կապի դրսևորման ձև՝ Պարսոնսը կարծում էր, թե անհատների միջև գործառնության կապի նպատակահարմարությամբ է պայմանավորված ամբողջ հասարակության կայունությունը: Նա հատկապես ընդգծում էր մարդկանց միջև գործող բարոյական գործառնության կապերի կարևորությունը հասարակության ներդաշ-

նակ զարգացման համար, պնդում էր, թե բարոյական կապերի ադապտումը բացասաբար է անդրադառնում սոցիալական համակարգերի զարգացման վրա, ընդ որում՝ բարոյական կապերի խզումը կարող է հանգեցնել համակարգի կործանման: Ըստ Պարսոնսի՝ համակարգը հասնում է կործանման նաև այն դեպքում, երբ համակարգի վրա ներգործող ուժերը գերազանցում են համակարգի ներսում կայունությունը պահպանող ուժերին: Ոչ միայն Պարսոնսը, այլև սոցիոլոգներից շատերը պաշտպանում են այն տեսակետը, որ հոգևոր-մշակութային արժեքների, հատկապես բարոյական արժեքների պահպանումը սոցիալական համակարգի գլխավոր խնդիրն է: Ասվածը հիմնավորելու համար նրանք բերում են հռոմեական կայսրության կործանման օրինակը՝ նշելով, որ վիթխարի կայսրությունը կործանվեց ոչ այնքան գոթական ցեղերի վայրի ներխուժման պատճառով, որքան այն պատճառով, որ հռոմեացիները սկսեցին արհամարհել իրենց իսկ ստեղծած բարոյական բարձրագույն արժեքները: Այս տեսակետից կառուցվածքային գործառույթային վերլուծության տեսության նպատակը հենց սոցիալական համակարգի գործառույթային կայունության պահպանումն է և սոցիալական ու մշակութային արժեքների օգնությամբ մարդկանց միավորելը: Դիալեկտիկական տեսության կողմնակիցները հայտարարում են, թե կառուցվածքային գործառույթային մեթոդը միակողմանի է, քննարկվում են միայն գործառույթային կապերը, անտեսում սոցիալական երևույթների պատճառահետևանքային կապերը, հետևաբար այդ մեթոդը չի կարող բացահայտել սոցիալական զարգացման դինամիկան, վերհանել հասարակության օրենքներն ու օրինաչափությունները: Այդ մեթոդի շրջանակներում սոցիալական օրինաչափությունները ոչ թե զարգացման, այլ համակարգի գերխառնության օրինաչափություններն են: Նրանք գտնում են, որ Մարքսի տեսությունն ավելի խորն է վերլուծում հասարակական կյանքը, քանի որ այստեղ կառուցվածքահամակարգային մեթոդը ներքնապես կապված է դիալեկտիկական մեթոդի հետ: Չարգացումը հանդես է գալիս որպես հակադրությունների միասնություն, հակասությունը գործում է համակարգի զարգացման բոլոր փուլերում: Դիալեկտիկական մեթոդի համաձայն՝ ամեն մի համակարգ, սոցիալական օրգանիզմ կամ երևույթ, որքան էլ կատարյալ, ավարտուն տեսք ունենա, միևնույն է, ներքնապես հակասական է: Չարգացման անվերջ գործընթացի և որոշակի համակարգերի միջև գոյություն ունի հակասություն: Մյուս կողմից՝ համակարգային մեթոդը չի կարող համակարգն ընդգրկել իր որակական բազմազանության մեջ, նրա ողջ բովանդակության և բնույթի բացահայտման ձևով, քանի որ այն ուսումնասիրում է կայունը, տրվածը, արդեն ձևավորվածը և չի որսում շարժվող, փոփոխվող, նորից առաջացման բարդ գործընթացը: Այդ միակողմանիությունը նկատել է Հեգելը, ապա՝ Մարքսը, որը, հասա-

րակությունը վերլուծելով դիալեկտիկորեն, կարողացավ բացահայտել հասարակության տնտեսական, սոցիալական համակարգերի օրենքները, ինչպես նաև պատմության շարժման ու զարգացման համընդհանուր օրինաչափությունները:

Հեգելը և Մարքսը բացահայտեցին սոցիալական իմացության դիալեկտիկան, որի էությունն այն է, որ կոնկրետ-պատմական ձևում վերարտադրի հասարակական-պատմական իրականությունը՝ որպես անհրաժեշտի ու պատահականի, ընդհանուրի և եզակիի, գիտակցականի ու տարերայինի, օրինաչափի և անհատականի բարդ փոխազդեցություն:

Սոցիալական համակարգերի գիտական վերլուծությունը պահանջում է հիմնախնդրային մոտեցում, գոյաբանական ու իմացաբանական, փաստական ու տեսական հայեցակետերի դիալեկտիկական միասնություն:

МЕТОДЫ ИССЛЕДОВАНИЯ ИСТОРИИ И ОБЩЕСТВА

АМИРЯН Г. Р.

Резюме

Анализ исторической теории, общественных, исторических явлений и событий, а также изучение человеческого поведения и деятельности предполагает применение соответствующего методологического подхода и определенных методов: комплексного, познавательного, аналитического, исторического, логического, обобщающего, индивидуального и метода изучения общества.

Характерными являются обобщающий метод, действующий в сфере естествознания, и индивидуальный метод в исторической науке.

THE METHODS OF THE RESEARCH OF HISTORY AND SOCIETY

G. AMIRYAN

Abstract

The theoretical analysis of history, the research of social phenomena, events and facts, human activities and behaviour assume corresponding methodical approach, certain use of methods. Some of these methods are: the research structural method of society, cognitive method, analytical method, historical method, logical method, generalizing method and individual method. We should outline among them the generalizing method which is used in the field of natural sciences, and the individual method which is used in the field of historical sciences.